

# ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

## ԼԻԼԻԹ ԿԱՄՈՅԻ ՄԱԿՈՒՆՑ

«ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆ» ԵՎ «ԿԵՂՇԻՔ» ՀԱՄԿԱՑՈՒՅԹՆԵՐԸ  
ՃԱՆԱԶՈՂԱԿԱՆ ԵՎ ԳՈՐԾԱԲԱՆԱԿԱՆ ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ  
ԴԻՏԱՆԿՅՈՒՆԻՑ (ԱՆԳԼԵՐԵՆ ԵՎ ՀԱՅԵՐԵՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ  
ԴԻՍԿՈՒՐՄՆԵՐԻ ԶՈՒԳԱԴՐՈՒԹՅԱՄԲ)

Ժ.02.07 - «Գերմանական լեզուներ» մասնագիտությամբ  
բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական  
աստիճանի հայցման ատենախոսության

Ս Ե Ղ Մ Ա Գ Ի Ր

ԵՐԵՎԱՆ 2013

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում:

Գիտական ղեկավար՝

բ.գ.դ., դոցենտ Ա.Ա. Միմոնյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

բ.գ.դ., պրոֆեսոր Գ.Ռ. Գասպարյան  
բ.գ.թ., դոցենտ Ն.Հ. Գասպարյան

Առաջատար կազմակերպություն՝

Խ. Աբովյանի անվան պետական  
մանկավարժական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2013թ. դեկտեմբերի 20-ին, ժամը 12:30-ին ՀՀ ԲՈՂ-ի՝ ԵՊՀ-ում գործող 009 «Գերմանական լեզուներ» մասնագիտական խորհրդի նիստում (ք. Երևան, Ալեք Մանուկյան 1):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2013 թ. նոյեմբերի 19-ին:

Մասնագիտական խորհրդի  
գիտական քարտուղար,  
բ.գ.դ., պրոֆեսոր՝



Ե.Լ. Երզնկյան

20-րդ դարի վերջին տարիներից սկսած լեզվի և քաղաքականության միասնությունը գտնվում է ժամանակակից լեզվաբանական ուսումնասիրությունների կենտրոնում: Ճանաչողական և գործաբանական լեզվաբանությունը նոր լույս են սփռում աշխարհի քաղաքական պատկերի ընկալման և մեկնաբանման գործընթացի վրա՝ քաղաքական ելույթը դիտարկելով որպես ազգային մշակույթի կարևորագույն հատված, լեզվական պատկերի որոշակի զանգված, որն ազգային գիտակցության մեջ ձևավորվում և ստանում է իր ուրույն, առանձնահատուկ դրսևորումը<sup>1</sup>: Լեզվաճանաչողական մոտեցումը հնարավորություն է տալիս ավելի խորը ըմբռնել քաղաքական համատեքստում այն ամենը, ինչը բացահայտ չէ: Վերջին տարիներին բավականին թվով ճանաչողական հասկացության հետազոտություններ են կատարվել քաղաքական դիսկուրսի շրջանակներում: Քաղաքական գործիչն իր ելույթներով փորձում է կերտել իր ազնվաբարտ և պարկեշտ կերպարը՝ իրականությունը ներկայացնելով իրեն ձեռնտու երանգներով: Այս առումով, ժամանակակից քաղաքական աշխարհում հատուկ կարևորություն են սկսում ստանալ «ճշմարտություն» և «կեղծիք» հասկացությունները:

Ատենախոսությունը նվիրված է «ճշմարտություն» և «կեղծիք» հասկացությունների ուսումնասիրությանը քաղաքական դիսկուրսում՝ անգլերենի և հայերենի զուգահեռ վերլուծությամբ: Աշխատանքում այս հասկացությունների քննությունը կատարվել է ճանաչողական և գործաբանական մոտեցումների համադրմամբ:

Վերջին շրջանում ուշադրության է արժանանում դիսկուրսի վերլուծության ճանաչողական և գործաբանական համաժամանակյա ուսումնասիրությունը, որը դիտարկվում է որպես արդի լեզվաբանության պահանջներին համահունչ մոտեցում: «Ճշմարտություն» և «կեղծիք» հասկացությունների ուսումնասիրությունը քաղաքական դիսկուրսի համատեքստում հատկապես **արդիական է**, քանի որ կեղծիքի քողարկման կամ ճշմարտությունը որոշակի անկյան տակ ներկայացնելու շնորհիվ քաղաքական գործիչը կարող է ձեռք բերել հանրային աջակցություն, իշխանություն, բարձր սոցիալական դիրք և, էական ազդեցություն ունենալով տվյալ հասարակության մեջ, որոշել տվյալ ժողովրդի, պետության զարգացման ուղին:

Ատենախոսության գիտական **նորույթն** այն է, որ առաջին անգամ փորձ է արվել «ճշմարտություն» և «կեղծիք» հասկացությունների համապարփակ հետազոտություն կատարել ճանաչողական լեզվաբանության տեսանկյունից վեր հանելով «ճշմարտություն» և «կեղծիք» հասկացությունների հասկացական կադապարները, կատարել վերը նշված միավորների հասկացական, պատկերային և արժեքային բաղադրիչների վերլուծություն, համակարգել մարդու գիտակցության վրա ազդող հիմնական ճանաչողական գործոնները,

---

<sup>1</sup> Чудинов Э.М. Природа научной истины. М., 1977.

գարգացնել Ձ. Սերլի խոսքային ակտերի տեսությունը՝ «ճշմարտություն» և «կեղծիք» հասկացությունների հիման վրա, ինչպես նաև կատարել «ճշմարտություն» և «կեղծիք» հասկացությունների զուգադրական վերլուծություն անգլալեզու և հայալեզու քաղաքական դիսկուրսում խոսքային ներագոյան տեսության դիտանկյունից:

Հետազոտության **նպատակը** «ճշմարտություն» և «կեղծիք» հասկացությունների ճանաչողական և գործաբանական ուսումնասիրությունն է, նրանց առկայացման և դրսևորման հետազոտությունը անգլալեզու և հայալեզու քաղաքական դիսկուրսում: Նշված նպատակին հասնելու համար աշխատանքում առաջադրվել են հետևյալ **խնդիրները**՝

- համակողմանի քննության ենթարկել դիսկուրս հասկացությունը, վեր հանել նրա սահմանումը, դասակարգել դիսկուրսի տարատեսակները, քննել դրանք ճանաչողական լեզվաբանության տեսանկյունից,

- ուսումնասիրել և որոշարկել հասկացույթը՝ որպես «աշխարհի պատկերի» առանցքային միավոր,

- վեր հանել «ճշմարտություն» և «կեղծիք» հասկացությունների առանձնահատկությունները ճանաչողական լեզվաբանության տարբեր տեսությունների շրջանակներում,

- ուսումնասիրել «ճշմարտություն» և «կեղծիք» հասկացությունները ճանաչողական կաղապարների (ֆրեյմներ)՝ տեսանկյունից,

- կատարել «ճշմարտություն» և «կեղծիք» հասկացությունների լեզվամշակութային ուսումնասիրություն՝ անգլերենի և հայերենի զուգադրությամբ,

- ուսումնասիրել փոխաբերությունները՝ որպես քաղաքական դիսկուրսում ճանաչողական մոդելի դրսևորում,

- վերլուծել քաղաքական դիսկուրսի ընկալման վրա ազդող հիմնական ճանաչողական գործոնները՝ ելակետ համարելով արժեքային բաղադրիչը,

- հետազոտել «ճշմարտություն», «կեղծիք» հասկացությունների լեզվագործաբանական դրսևորումները խոսքային ակտերում,

- խոսքային ներագոյան տեսության շրջանակներում ուսումնասիրել մանիպուլյացիան լեզվական և արտալեզվական դրսևորումներով:

Հետազոտության **օբյեկտն է** անգլալեզու և հայալեզու քաղաքական դիսկուրսների ուսումնասիրությունը:

Հետազոտման **առարկան** է «ճշմարտություն» և «կեղծիք» հասկացությունների համապարփակ ուսումնասիրությունը քաղաքական դիսկուրսում՝ ճանաչողական և գործաբանական լեզվաբանության տեսանկյունից:

Նշված խնդիրները լուծելու համար հետազոտության **մեթոդաբանական և տեսական հիմք** են ծառայել Ու. Չեյֆի, Ե.Ս. Կուբրյակովայի, Ն.Դ. Արուսյունովայի, Տ.Ա. Վան Դեյքի, Ջ. Լաքոֆֆի, Մ. Շվարցի, Չ. Ֆիլմորի, Ջ. Սերլի, Վ.Բ. Կարասիկի, Ե.Բ. Շեյգալի, Ա.Պ. Չուրիևովի և այլոց գործաբանական, ճանաչողական, խոսքային ակտերի, հասկացական կաղապարների

տեսությունները: Ատենախոսության մեջ կիրառվել են խոսույթային, համատեքստային, հասկացութային, լեզվառձական, նկարագրական և ընդհանրացման մեթոդները:

Անգլալեզու և հայալեզու քաղաքական դիսկուրսի ուսումնասիրության համար օգտագործվել են մի շարք քաղաքական գործիչների ելույթներ (Բարաք Օբամա, Ջոն ՄաքՔեյն, Ռ.Ռեյգան, Ռ.Նիքսոն, Բ.Բիլթոն, Մ.Թետչեր, Թ.Բլեյեր, Ս.Սարգսյան, Բ.Հովհաննիսյան)՝ վերցված նախընտրական քարոզարշավներից, միջազգային հանրության առջև ունեցած ելույթներից: Ուսումնասիրվել են քաղաքական մեղադրանքներին արձագանքող ելույթներ, քննության են առնվել նաև լեզվամշակութային առանձնահատկությունները բնորոշող նախընտրական կարգախոսներ:

Ատենախոսության **տեսական արժեքը** պայմանավորված է նրանով, որ ուսումնասիրության արդյունքները կարող են նպաստել քաղաքական դիսկուրսի մեկնաբանմանը, հասկացութաբանության, գործաբանության, լեզվամշակութաբանության, ինչպես նաև խոսքային ներազդման տեսությունների զարգացմանը:

Հետազոտության արդյունքները կարող են **գործնական նշանակություն** ունենալ քաղաքական դիսկուրսի ոլորտում ուսումնասիրություններ կատարող ինչպես լեզվաբանների, այնպես էլ քաղաքական ելույթներ մշակողների, տեխնոլոգների, վերլուծաբանների համար: Կատարված ուսումնասիրությունները կարող են ներդրվել «Օտար լեզուները հատուկ նպատակների համար» ուսումնական ծրագրերում, դիսկուրսի տեսության, ճանաչողական լեզվաբանության, գործաբանության, միջմշակութային հաղորդակցման դասընթացներ մշակելիս, ինչպես նաև դասավանդվել քաղաքագիտական և դիվանագիտական ֆակուլտետներում:

Կատարած վերլուծությունները կարող են ընդգրկվել նաև լեզվաբանության և քաղաքագիտության բաժիններում սովորող ուսանողների համար նախատեսված ուսումնամեթոդաբանական ձեռնարկներում:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից:

Ատենախոսության ներածության մեջ հիմնավորվում է ընտրված թեմայի արդիականությունը, ամրագրվում են հետազոտության նպատակն ու խնդիրները, որոշվում են ուսումնասիրության օբյեկտը, առարկան, նորույթը, տրվում են աշխատանքի տեսական և գործնական նշանակությունը:

Ատենախոսության առաջին՝ **«Դիսկուրսի տեսական հիմնադրույթները»** գլուխը բաղկացած է չորս ենթագլխից: Առաջին ենթագլուխում («Դիսկուրսի ծագումնաբանությունը, դասակարգումը և կառուցվածքը») քննության ենք առել դիսկուրսի սահմանումները, ուսումնասիրել վերջինիս գործառույթներն ու դրսևորումները՝ կախված ճանաչողական գործոններից կամ իրավիճակային առանձնահատկություններից: Դիսկուրս եզրույթի բազմանշանակության պատճառով լեզվաբանները դիսկուրսը տարբեր կերպ են մեկնաբանում՝

կապակցված տեքստ, տեքստի բանավոր-խոսակցական ձև, երկխոսություն, արտահայտչամիջոցների խումբ, որոնք միմյանց հետ կապված են իմաստով, խոսքային հաղորդակցություն՝ գրավոր կամ բանավոր տեսքով<sup>2</sup>:

Անդրադառնալով դիսկուրսի սահմանմանը վերաբերող տարբեր լեզվաբանական տեսություններին հիմք ենք ընդունել Ն.Դ. Արուսյունովայի սահմանումը, համաձայն որի դիսկուրսը համարվում է կապակցված տեքստ, որը դիտարկվում է հասարակական, մշակութային, գործաբանական, ճանաչողական գործոնների հետ մեկտեղ<sup>3</sup>:

Դիսկուրսի կառուցվածքի մասին խոսելիս հարկ է նշել, որ այն ունի բավականին բարդ կառուցվածք՝ մակրոկառուցվածք կամ ընդհանուր կառույց և միկրոկառուցվածք կամ տեղային կառույց: Մակրոկառուցվածքը դիսկուրսի հիմնական բովանդակության ընդհանուր նկարագրությունն է, որը լսողը կառուցում է ընկալման ընթացքում: Ի հակադրություն մակրոկառուցվածքի՝ միկրոկառուցվածքը դիսկուրսի բաժանումն է նվազագույն բաղադրիչների<sup>4</sup>: Դիսկուրսը հանդես է գալիս երկու տարբերակներով՝ ինստիտուցիոնալ և անհատական: Քաղաքական դիսկուրսը համարվում է ինստիտուցիոնալ դիսկուրսի տարատեսակ, որին բնորոշ է պայքար իշխանության, քաղաքական առաջնորդության, գերակայության համար:

Դիսկուրսի տեսակներից՝ իրավաբանական, վարչական, բժշկական, կրոնական, տեխնիկական, գործնական, սպորտային, զանգվածային տեղեկատվական, դիվանագիտական, մեզ համար ատենախոսության շրջանակներում հետաքրքրություն է ներկայացնում քաղաքական դիսկուրսը, որը մեծ ազդեցություն ունի հասարակական գիտակցության վրա:

Երկրորդ ենթագլխում («Քաղաքական դիսկուրսը ճանաչողական լեզվաբանության տեսանկյունից») կատարել ենք դիսկուրսի ճանաչողական վերլուծություն՝ առաջնորդվելով նախնառաջ այն գաղափարով, որ քաղաքական դիսկուրսում արտացոլված է հասարակական գիտակցությունը: Այն անմիջականորեն կապված է հասարակության արժեքային կողմնորոշումների հետ, իսկ արժեքային կողմնորոշումները հաճախ արտացոլվում են իմաստային և ճանաչողական կառույցներում:

Ճանաչողական վերլուծության հիմնաքարերից են ճանաչողական կաղապարները, որոնց ուսումնասիրությունը կատարվել է երրորդ ենթագլխում («Ճանաչողական կաղապարները ճանաչողական լեզվաբանության մեջ»): Ճանաչողական կաղապարների քննությունը թույլ է տալիս համակարգել «մարդկային փորձի, լեզվական միավորների նշանակության, ընդհանուր գիտելիքների ակտիվացման միջոցների կառուցման և արտացոլման»

---

<sup>2</sup> Николаева Т.М. Лингвистика текста. Современное состояние и перспективы // Новое в зарубежной лингвистике, вып. 8, М., 1978.

<sup>3</sup> Арутюнова Н. Д. Язык и мир человека. М., 1998, с. 96.

<sup>4</sup> Караулов Ю.М. Русский язык и языковая личность. М.: Наука, 1987.

սկզբունքները, որոնք հաղորդակցության ընթացքում ապահովում են հասկացվածությունը:

Ճանաչողական լեզվաբանության մեջ ամենատարածված ճանաչողական մոդելներից է համարվում Մ. Մինսկու հասկացական կաղապարների տեսությունը: Ըստ Մ. Մինսկու՝ հասկացական կաղապարն իրենից ներկայացնում է տվյալների կառուցվածք, որը նախատեսված է կարծրատիպային իրավիճակ ներկայացնելու համար: Հասկացական կաղապարը կիրառվում է խոսքային, ոչ խոսքային տեղեկատվության ամրագրման համար «տեղեկատվական տվյալների կառուցվածքի տեսքով, որտեղ արտացոլված են որոշակի կարծրատիպային իրավիճակի և տեքստի վերաբերյալ փորձի արդյունքում ձեռք բերված գիտելիքները»<sup>5</sup>:

Վերջին ենթագույլը քննարկում է դիսկուրսի գործաբանական մոտեցումները («Դիսկուրսի գործաբանական մոտեցումները»): Ըստ Տ. Վան Դեյքի՝ դիսկուրսը հարկ է դիտարկել որպես խոսք գումարած սոցիալական համատեքստ, որն իր մեջ ներառում է՝ 1) սոցիալական իրավիճակի տեսակ՝ անձնական, հասարակական, ինստիտուցիոնալ (պաշտոնական), ոչ պաշտոնական, 2) սոցիալական փոխազդեցության մասնակիցների բնութագրեր՝ դիրք (դեր, կարգավիճակ), հատկություններ (սեռ, տարիք և այլն), հարաբերություններ (զերակայություն, հեղինակություն), գործառույթներ<sup>6</sup>:

Գործաբանական տեսությունը ձևավորում է գործաբանական մեկնաբանության կանոններ: Այլ կերպ ասած՝ յուրաքանչյուր արտաբերված պնդմանը վերագրում է խոսքային ակտի իլոկուտիվ ուժ կամ կարգավիճակ: Լսողը պետք է կարողանա կողմնորոշվել և հասկանալ, թե արդյոք արտաբերված խոսքը ենթադրում է սպառնալիք կամ խոստում: Այսինքն՝ լսողին անհրաժեշտ է որոշակի տեղեկատվություն խոսքային ակտերը տարբերակելու համար:

Ատենախոսության երկրորդ **«Ճշմարտություն» և «կեղծիք» հասկացությունների դրսևորումները քաղաքական դիսկուրսում՝ ճանաչողական լեզվաբանության տեսանկյունից** գլուխը բաղկացած է յոթ ենթագլխից: Առաջին ենթագլխում («Աշխարհի պատկերը և հասկացույթը ճանաչողական լեզվաբանության մեջ») ուսումնասիրվում են ճանաչողական լեզվաբանության հիմնահարցերը: Ճանաչողական գիտությունը, ինչպես սահմանում է փիլիսոփայական հանրագիտարանը, գիտությունների ամբողջություն է, որն ուսումնասիրում է գիտակցությունը բարձրագույն մտավոր գործընթացների հետ համատեղ: Ճանաչողական լեզվաբանության ուսումնասիրության հիմնական միավորը հասկացույթն է:

Աշխատանքում հասկացույթը դիտարկվում է ճանաչողական լեզվաբանության և լեզվամշակութաբանության տեսանկյունից: Ճանաչողական լեզվաբանության տեսանկյունից ընդունելի ենք համարում Ե.Ս. Կուրրյակովայի և

<sup>5</sup> Минский М. Фреймы для представления знаний. М.: Энергия, 1979.

<sup>6</sup> Дейк Т. А. Язык. Познание. Коммуникация. М.: Прогресс, 1989.

Ն.Դ. Արուտյունովայի հասկացության վերաբերյալ սահմանումները, որոնք լրացնում են մեկը մյուսին: Ըստ Կուբրյակովայի՝ հասկացույթը ծառայում է մեր գիտակցության հոգևոր և մտավոր ռեսուրսների բացատրությանը, ինչպես նաև այն տեղեկատվական համակարգին, որն արտացոլում է մարդու գիտելիքները և փորձը<sup>7</sup>: Արուտյունովան ձևավորել է հասկացությունների ուսումնասիրության տրամաբանական մոտեցումը: Նա գտնում է, որ հասկացությունները ձևավորվում են այնպիսի գործոնների ազդեցության տակ, ինչպիսիք են ազգային ավանդույթը և գաղափարախոսությունը, կենսափորձը, մշակույթը, զգացողությունները և արժեհամակարգը<sup>8</sup>:

Հասկացույթը կարող է դիտարկվել նաև լեզվամշակութաբանության տեսանկյունից: Ատենախոսությունում հետազոտությունների համար հիմք է ընդունվել Վ.Ի. Կարասիկի լեզվամշակութային հասկացույթի տեսությունը, ըստ որի հասկացությունները դիտարկվում են եռաչափ մակարդակում՝ հասկացական, պատկերային և արժեքային<sup>9</sup>:

Երկրորդ՝ ««Ճշմարտություն» և «կեղծիք» հասկացությունների դիտարկումը տարբեր գիտական ուղղություններում» ենթազիխում նշված հասկացությունները քննվում են փիլիսոփայության, տրամաբանության, իրավաբանության, լեզվաբանության, կրոնի տեսանկյուններից: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ «Ճշմարտություն» և «կեղծիք» հասկացությունները կարող են մեկնաբանվել յուրովի՝ ընկալվելով բացարձակ կամ ոչ բացարձակ, օբյեկտիվ կամ իրավիճակային: Փիլիսոփայական մոտեցումը հիմնաքարային է գրեթե բոլոր ուսմունքների համար:

Երրորդ ենթազիխում (««Ճշմարտություն» և «կեղծիք» հասկացությունների մեկնաբանությունը անզլերենի և հայերենի զուգադրությամբ») «Ճշմարտություն» և «կեղծիք» հասկացությունների ուսումնասիրությունը կատարվում է Վ.Ի. Կարասիկի հասկացությունների տեսության հասկացական բաղադրիչի հիման վրա: «Ճշմարտություն» և «կեղծիք» հասկացությունները անզլերենում և հայերենում զուգահեռաբար վերլուծելիս նկատում ենք, որ անզլերենում այս երկու հասկացությունների համար հիմնականում օգտագործվում է մեկական բառ՝ truth և lie, հայերենում երկուսի մասին խոսելիս հաճախ օգտագործում ենք մեկից ավելի բառեր՝ ճշմարտություն, իսկություն կամ կեղծիք, սուտ (ռուսերենում նույնպես առկա է այս երկուսը): Բառարաններում սահմանված truth հասկացույթն ունի հետևյալ հասկացական նշանակությունները՝ «օբյեկտիվ աշխարհ» (reality, fact), «սկզբունք» (principle), «բարոյական հատկանիշներ» (sincerity, truthfulness),

---

<sup>7</sup> Кубрякова Е.С. О понятиях дискурса и дискурсивного анализа в современной лингвистике // Дискурс, речь, речевая деятельность. РАН Институт научн. информации по общественным наукам. Функциональные и структурные аспекты. М., 2000.

<sup>8</sup> Арутюнова Н. Д. Язык и мир человека. М., 1998.

<sup>9</sup> Карасик В.И. Культурные доминанты в языке // Языковая личность: культурные концепты: Сб. науч. тр. Волгоград - Архангельск, 1996.



«աստվածային, կրոնական իմաստ» (God, Universal truth): Որոշ բառարաններում կարող ենք նկատել կրոնի հետ կապված իմաստներ՝ abstract truth personified as goddess, այսինքն՝ վերացական ճշմարտություն՝ աստվածուհու մարմնավորմամբ (Online Plain Text English Dictionary), righteousness, true religion՝ արդարաբարություն, իրական հավատ (Webster's Dictionary 1913): Բառարանային ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ անգլերենում «lie» բառն ունի միտումնավորության երանգ, և սահմանումներում հաճախ տեղ է գտնում դիտավորություն բառը: Մինչդեռ հայերենում միայն ուշադիր դիտարկման պարագայում կարելի է նկատել, որ միտումնավորության որոշակի երանգ պարունակում է «սուտ» բառը, իսկ «կեղծիքի» սահմանումը հիմք է տալիս ենթադրելու, որ խոսողը կարող է կեղծել նաև ենթագիտակցաբար, ոչ միտումնավոր: Նկատենք, որ «ճշմարտություն» հասկացույթը լայն, ընդգրկուն, գլոբալ նշանակություն ունի, մինչդեռ իսկությունն առավել հատվածային է և ներկայացնում է ճշմարտության որոշակի անկյուն: «Կեղծիք» և «սուտ» հասկացույթները հայ բառարանագետների սահմանմամբ զուգորդվում են ոչ ճշմարտության, ոչ անկեղծության, դատարկության, շինծու լինելու հետ:

Հիմնվելով Չ. Ֆիլմորի և Մ. Մինսկու տեսությունների վրա՝ չորրորդ ենթագլխում (««Ճշմարտություն» հասկացույթի հասկացական կաղապարները») առաձևացվել են «Ճշմարտություն» հասկացույթի հասկացական կաղապարներ: Ճշմարտության հասկացական կաղապարներից յուրաքանչյուրն իրացվում և գործում է որոշակի ոլորտներում, մասնավորապես կրոնական (ճշմարտություն-Աստված), հոգևոր (ճշմարտություն-ներդաշնակություն, ճշմարտություն-ընտանիք), իրավական, (ճշմարտություն-կարգ), բարոյական (ճշմարտություն-արդարություն, ճշմարտություն-ազնվություն, ճշմարտություն-ազատություն), պետական (ճշմարտություն-պետություն, ճշմարտություն-շահ, ճշմարտություն-հայրենիք), ներկայացուցչական (ճշմարտություն-երդում):

Ճշմարտության ամենամեծ չափանիշներից մեկը համարվում է Աստված, ընդ որում՝ ոչ թե որևէ կրոնի, այլ Աստված որպես հավաքական, հոգևոր, համամարդկային ճշմարտություն: Աստծո անվան արծարծումը շատ հաճախ հանդիպում ենք հատկապես ամերիկյան քաղաքական դիսկուրսում: Այն սովորաբար ուղեկցվում է «հավատ» կամ «հավատք» բառերով: Քաղաքական դիսկուրսում ճշմարտություն-Աստված հասկացական կաղապարը մասնավորապես կիրառելի է նախագահների երդմանկալության արարողության և համապետական այլ ուղերձների ժամանակ, որտեղ ճշմարտության դրսևորումը տեղի է ունենում նաև երդման միջոցով:

Մարդկանց մեջ դաջված է այն միտքը, որ ճշմարտությունը չի կարող լինել առանց արդարության: «Եթե արդար է, ուրեմն ճշմարիտ է» սկզբունքը գործում է ոչ միայն իրավական, այլ նաև քաղաքական դաշտում: Արդարության ուղերձներն առկա են գործնականում բոլոր տեսակի քաղաքական դիսկուրսներում՝ օրենքի գերակայության, արդար ընտրությունների, իրավահասարության, ռասսայական

հավասարության, հասարակական և սոցիալական արդարության համատեքստում:

Առանձնացված հասկացական կաղապարների տարատեսակներից թերևս առավել կարևորների թվին կարող ենք դասել ճշմարտություն-պետություն հասկացական կաղապարը: Քաղաքական դիսկուրսում հաճախ պետությունը համարվում է գերագույն ճշմարտություն: Այն, ինչ բխում է պետության շահերից, ճշմարիտ է և անքննելի: Նման հասկացական կաղապարի պրակտիկան կիրառելի է հատկապես արևմտյան երկրների քաղաքական դիսկուրսում, երբ պետությունը համարվում է գերակա շահ և պետական գիտակցությունը դրված է ամենաբարձր հարթության վրա, քանի որ յուրաքանչյուր քաղաքացի իր և իր ընտանիքի անվտանգության, ազատության և բարեկեցության երաշխավոր է համարում սեփական պետությունը: Նմանատիպ հասկացական կաղապարի կիրառությունը դառնում է ավելի արդիական, երբ պետությունը կանգնած է արտաքին վտանգի առջև կամ այն երկրներում, որտեղ ահաբեկչությունը հիմնական մարտահրավերներից մեկն է:

Պետական շահի պահանջում է նաև ճկունություն և քաղաքականության համապատասխանեցում տվյալ ժամանակաշրջանի պատմական ու քաղաքական իրողությանը: 2003թ. հուլիսի 17-ին ԱՄՆ Կոնգրեսի հետ հանդիպման ժամանակ Մեծ Բրիտանիայի վարչապետ Թոնի Բլեյերը խոսեց տվյալ պատմական փուլի մարտահրավերների և նրանից բխող քաղաքականության մասին:

“... in another part of our globe there is shadow and darkness, where not all the world is free, where many millions suffer under brutal dictatorship, where a third of our planet lives in a poverty beyond anything even the poorest in our societies can imagine, and where a fanatical strain of religious extremism has arisen, that is a mutation of the true and peaceful faith of Islam.

And because in the combination of these afflictions a new and deadly virus has emerged. The virus is terrorism ...<sup>10</sup>”.

Մեջբերված հատվածից երևում է, որ Մեծ Բրիտանիայի նախկին վարչապետ Թոնի Բլեյերն իր խոսքում կիրառում է ճշմարտություն-պետություն հասկացական կաղապարը: Նա նշում է, որ իր երկրի պետական շահը տվյալ պարագայում ենթադրում է աջակցել Ամերիկայի արտաքին քաղաքականությանը: Թ. Բլեյերն իր խոսքում նկարագրելով մուսուլմանական երկրները՝ օգտագործում է բավականին մեծ թվով բացասական երանգ ունեցող բառեր՝ shadow, darkness, suffer, brutal dictatorship, poverty, fanatical strain, religious extremism, deadly virus, terrorism, որոնց միջոցով ընդգծում է իրավիճակի ծայրահեղ վտանգավոր լինելը և մղում լսողին ճշմարտությունը փնտրելու բոլորովին հակառակ բնեռում: Դիսկուրսում poor ածականը գերադրական

---

<sup>10</sup> <http://edition.cnn.com/2003/US/07/17/blair.transcript/>

աստիճանով կիրառելը, brutal, dictatorship բառերը սաստկացնում են իրավիճակի լրջությունը: Բայերն օգտագործվում են կամ ներկա անորոշ, կամ ներկա վաղակատար ժամանակաձևերով: Վերջինիս միջոցով դիսկուրսի հեղինակը ցույց է տալիս արդեն առկա աղետալի իրավիճակը, մինչդեռ ներկա անորոշ ժամանակաձևի կիրառմամբ՝ զգայական մակարդակում փորձում է հաղորդել, որ ողբերգական արդյունքը մոտ է:

Հարկ է նշել, որ ճշմարտություն-պետություն դիսկուրսը այդքան էլ տարածված չէ հայկական իրականությունում: Մեզ մոտ ավելի կիրառական է այն դիտարկել հայրենիքի համատեքստում:

Հատկանշական է, որ հատկապես այն ազգերը, որոնք աշխարհի տարբեր հատվածներում ունեն սփյուռք, քաղաքական դիսկուրսում հաջողելու համար շեշտադրումն անում են ճշմարտություն-հայրենիք հասկացական կադապարի վրա: Այսպես, քաղաքական խոսույթում ազգայնական և հայրենասիրական հողի վրա շեշտադրումն անելը ոչ միայն միավորող դեր կարող է խաղալ, այլև կարող է այդ անկյան տակ ճշմարիտ ընկալվել: Հայ քաղաքական գործիչները գերծ չեն նման հասկացական կադապարի օգտագործումից, որով և ուղղակի կամ անուղղակի կերպով հղում է կատարվում ակունքներին, հայրենիքին, հերոսներին:

«... Մենք այսօր կեղծ երդում չենք տալու, մենք միասին տալու ենք Հայաստանի, մեր օրենքի, մեր իրավունքի, մեր Նժդեհի, մեր Լեոնիդի և Մոնթեի, մեր երեխաների երդումը ...<sup>11</sup>»:

Ակնհայտ է, որ տվյալ դիսկուրսի հեղինակը՝ Ռաֆֆի Հովհաննիսյանը, նպատակ ունի վստահեցնել ընտրագանձվածին, որ քաղաքական գործի մղումները հայրենասիրական են, հետևաբար՝ ճշմարիտ: Նա մեջբերում է պատմական հեղինակությունների, հերոսների անուններ, որոնք մեծ դեր են ունեցել հայրենիքի պահպանման հարցում, իսկ «երեխաների երդումը» արտահայտությամբ հղում կատարում պատմական հիշողությանը, պատմական ճշմարտությանը:

Ընտանիքի և ներդաշնակության գաղափարը քաղաքական դիսկուրսում նույնպես առնչվում է ճշմարտություն հասկացության հետ: Շատ ազգերի մոտ այն հայրենիքին հավասարազոր կատեգորիա է:

Հինգերորդ ենթազվխում (««Կեղծիք» հասկացության հասկացական կադապարները») առանձնացվել են «կեղծիք» հասկացության հասկացական կադապարները: Մարդկային գիտակցության մեջ ցանկացած բան, որն առնչվում է ապատեղեկատվությանը, զրպարտությանը, մոլորությանը, աղավաղմանը, անազնվությանը, խաղին, զուգորդվում է կեղծիքի հետ:

Ապատեղեկատվությունը և փաստերի, դեպքերի, իրադարձությունների աղավաղումն ու խեղաթյուրումը լայն տարածում ունեն քաղաքական

---

<sup>11</sup> <http://www.yerkir.am/am/news/48289.htm>

դիսկուրսում: Դրանք ենթադրում են ճշմարտության ներկայացումը միայն որոշակի անկյան տակ և անտեսում են մյուս կողմերը՝ կեղծելով իրականությունը: Սովորաբար կեղծիք-ապատեղեկատվություն, կեղծիք-աղավաղում հասկացական կաղապարները լայն կիրառում են սկսում ստանալ նախընտրական շրջանում:

Կեղծիք-խաղ հասկացական կաղապարը այն տարատեսակներից է, որի բացահայտման համար մեծ դեր ունի ժամանակի գործոնը՝ կամ ապագայում դիսկուրսները համադրելու արդյունքում է պարզվում խոսքի կեղծ լինելը, կամ նախորդի հիման վրա է արվում այդ եզրակացությունը: Կեղծիք-խաղը կարող է նաև տեղ գտնել փոխաբերությունների տեսքով:

1984թ. ապրիլի 4-ին մամլո ասուլիսի ժամանակ նախագահ Ռ. Ռեյգանը կիսվեց իր մտորումներով երկրի զարգացման և առաջընթացի հեռանկարի հետ կապված՝ գուգահեռներ անցկացնելով Խորհրդային Միության հետ: Իր ելույթում նա խոսում էր ԽՍՀՄ-ի քիմիական զենքի մեծ պաշարների մասին, որոնք իր ձևակերպմամբ լուրջ սպառնալիք էին ԱՄՆ-ի համար:

“With regard to the space weapons, this is a situation in which the Soviet Union is ahead of us and already has and has in place such a weapon. We are still in the stage of studying such a thing”<sup>12</sup>.

Խոսելով սպառնացող վտանգի մասին Ռեյգանն այնուհետև կտրուկ անցում է կատարում հնարավոր համագործակցությանը՝ մոլորության մեջ գցելով լսարանին:

“The President's policy toward the Soviet Union seeks to achieve progress in . . . establishing a *better working relationship* with Moscow, characterized by *greater cooperation* and *understanding* and based on *mutual restraint and respect*.”<sup>13</sup>.

Մեջբերումից ակնհայտ է, որ գործ ունենք կեղծիք-մոլորություն հասկացական կաղապարի վառ օրինակի հետ: Մտահոգող այնորումներից հետո, որոնք պահանջում էին ռազմական լուրջ ներդրումներ և ազդեցիկ քաղաքականություն, անսպասելիորեն Ռեյգանը շարունակում է իր ելույթը բոլորովին այլ տոնայնությամբ՝ նշելով, որ թե ԱՄՆ-ն և թե ԽՍՀՄ-ն ունեն պատերազմներից խուսափելու ընդհանուր շահ: Նա խոսում է հնարավոր համագործակցության և ապագայի հանդեպ ազգերի միասնական քաղաքականության որդեգրման մասին՝ օգտագործելով այնպիսի կառույցներ, ինչպիսիք են՝ *better working relationship*, *greater cooperation*, *understanding*, *mutual restraint*, *respect*:

Վեցերորդ ենթազվում («Փոխաբերությունները քաղաքական դիսկուրսում») խոսվում է Վ.Ի. Կարապիլի տեսության պատկերային բաղադրիչի մասին, որն արտացոլվում է փոխաբերություններում: Ճանաչողական լեզվաբանության տեսանկյունից փոխաբերությունը ոչ այլ ինչ է, քան աշխարհը

<sup>12</sup> <http://www.reagan.utexas.edu/archives/speeches/1984/40484b.htm>

<sup>13</sup> <http://www.reagan.utexas.edu/archives/speeches/1984/40484b.htm>

ճանաչելու գործիք, քանի որ հիմնվում է զուգորդումների, առանձին երևույթների նմանությունների և տարբերությունների վրա, ինչի շնորհիվ ստեղծում է նոր անհատական մտքեր, որոնք հաղորդում են անհատի սուբյեկտիվ վերաբերմունքը և յուրովի մեկնաբանում աշխարհը<sup>14</sup>: Փոխաբերությունն ակներև է դարձնում աշխարհի պատկերի անտեսանելի հատվածը, օգնում է ստեղծել լեզվական պատկեր, որի ընկալումը հնարավոր է դառնում պատկերային զուգորդումների միջոցով<sup>15</sup>:

Հետազոտությունները ցույց են տալիս, որ փոխաբերություններն առավել հաճախ հանդիպում են երդմնակալության ելույթների ժամանակ թերևս պայմանավորված այն հանգամանքով, որ նրանց կիրառությունը պահանջում է նախապես լուրջ պատրաստվածություն՝ հաշվի առնելով տվյալ ազգի պատմական, ավանդական, մշակութային, քաղաքական հենքը:

«Ճշմարտություն» և «կեղծիք» հասկացույթների հիման վրա կատարված օրինակների ուսումնասիրության արդյունքում առանձնացվել են այնպիսի փոխաբերություններ, ինչպիսիք են truth-light (ճշմարտություն-լույս), truth-beacon (ճշմարտություն-փարոս), truth-fire (ճշմարտություն-կրակ), truth-glow (ճշմարտություն-հրացույք), truth-democracy (ճշմարտություն-ժողովրդավարություն), truth-home (ճշմարտություն-տուն), truth-bastion (ճշմարտություն-ամրոց), truth-universal experience (ճշմարտություն-համաշխարհային փորձ), lie-“friend” (կեղծիք-«ընկեր»), lie-“ally” (կեղծիք-«դաշնակից»), lie-“exceptionalism” (կեղծիք-«բացառիկություն»): Պնդումներին կեղծ կամ ճշմարիտ գնահատական տալու հարցում մեծագույն կարևորություն ունի ժամանակի գործոնը: Երբեմն միայն ժամանակի ընթացքում է պարզ դառնում, թե որքանով է ճշմարիտ այս կամ այն քաղաքական գործչի ելույթը, որքանով են անկեղծ նրա մղումները:

Կեղծիք արտահայտող փոխաբերությունները քաղաքական հրապարակային ելույթներում միտում ունեն երևույթները դրական, բարի լույսի ներքո ներկայացնել: 2009թ. իր երդմնակալության ելույթի ժամանակ Բ. Օբաման նշում է, որ Ամերիկան յուրաքանչյուր ազգի և մարդու բարեկամն է, դաշնակիցը:

...America is a *friend* of each nation, and every man...

Այն, որ Ամերիկան չի հանդիսանում բոլոր ազգերի և մարդկանց ընկերն ու բարեկամը, ակնհայտ է: Եվ դա պահանջում է Ամերիկայի քաղաքական շահը, սեփական շահով առաջնորդվում են բոլոր պետությունները: Օգտագործելով friend փոխաբերությունը Օբաման փորձում է ԱՄՆ-ն ներկայացնել բարի քեռու դերում, որի առաքելությունն ու միակ ցանկությունը աշխարհում խաղաղություն սփռելն է: «Ընկերը» զուգորդվում է մեկի հետ, ով քեզ չի դավաճանում, ում

<sup>14</sup> Залевская А.А. Психолингвистический подход к проблеме концепта // Методологические проблемы когнитивной лингвистики. Воронеж, 2001.

<sup>15</sup> Виноградов С. И. Нормативный и коммуникативно-прагматический аспекты культуры речи // Культура русской речи и эффективность общения. М.: Наука, 1996.

ճշմարտությունը կասկածի տակ չի դրվում, ինչի վրա արված է ելույթի հիմնական շեշտադրումը: Որոշ երկրների համար «ընկեր» փոխաբերությունը ճշմարիտ է, ԱՄՆ-ն իրապես բարեկամական և եղբայրական հարաբերությունների մեջ է նրանց հետ, սակայն այլոց պարագայում կեղծ է: Ակնհայտ է, որ Օբաման անկեղծ չէ երդմնակալության ժամանակ արված իր պնդումներում, և չեն կարող բոլոր ազգերի շահերը խաչվել իր երկրի շահի հետ:

Հարկ է ընդգծել, որ փոխաբերություններում կեղծիքն ու ճշմարտությունը հանդես են գալիս գուգահեռաբար:

Յոթերորդ ենթագլխում («Քաղաքական դիսկուրսի ընկալման վրա ազդող հիմնական ճանաչողական գործոնները») ուսումնասիրվել է Վ.Ի. Կարասիկի տեսության արժեքային բաղադրիչը: Ուսումնասիրության արդյունքում վեր են հանվել այն հիմնական գործոնները, որոնք էապես ազդեցություն են ունենում, մարդու, հասարակության գիտակցության և երևույթների ընկալման վրա: Ըստ այդմ առանձնացվել են հետևյալ գործոնները՝ գիտելիքների պաշարը (ձեռքբերովի և կենսափորձ), տեղեկատվությունը, արժեհամակարգը, աշխարհընկալումը (այդ թվում նաև մշակութային առանձնահատկությունները), բարոյահոգեբանական մթնոլորտը, սոցիալական վիճակը (կարգավիճակը): Որևէ մեկի կողմից ներկայացված դիսկուրսի նկատմամբ դատողություններն ու վերլուծությունները հիմնված են հիմնականում սեփական գիտելիքների պաշարի վրա՝ թե՛ կրթության և թե՛ տարիների ընթացքում կուտակված փորձի արդյունքում: Այսինքն՝ մենք դիմացինի խոսքի ճշմարտությունը գնահատելիս ելնում ենք մեր իսկ գիտելիքների պաշարից: Ըստ այդմ որոշում ենք, թե որքանով է տվյալ խոսքը ճշմարիտ կամ սուտ: Իրագեկ լինելը հնարավորություն է տալիս համադրել փաստերը, համեմատել տեսակետները, հակասություններ գտնել տվյալ պնդման և իրականության միջև, որը նույնպես հնարավորություն է տալիս գնահատել դիսկուրսի ճշմարիտ կամ կեղծ լինելը:

Գախված մարդու, հասարակության դավանած արժեքներից, աշխարհայացքից՝ ձևավորվում է ճշմարտության սեփական ընկալումը տվյալ անձի մոտ կամ ավելի լայն հանրություն: Այն, ինչ կարող է ճշմարտացի լինել որոշակի արժեհամակարգ ունեցող հասարակության շրջանում, կարող է անհեթեթություն հնչել նույն ժամանակահատվածում ապրող, բայց բոլորովին այլ արժեքային համակարգ ունեցող մարդկանց շրջանում: Պատահական չէ, որ քաղաքական գործիչներն իրենց ելույթները մշակելիս անպայմանորեն հաշվի են նստում տվյալ հասարակության աշխարհընկալման հետ և բառերի ընտրությունը նույնպես պայմանավորում լսարանով: Այդ հանգամանքի անտեսման հետևանքներից մեկին մենք ակնատես ենք եղել ՀՀ նախկին արտգործնախարար Վ. Օսկանյանի կողմից հնչեցրած «occupied territories» արտահայտությամբ, որը նա կիրառել էր Լեռնային Ղարաբաղի հետ կապված բանակցությունների համատեքստում և նկատի ուներ բառացիորեն այն, ինչ մենք անվանում ենք հայերեն՝ «զբաղեցրած տարածքներ»: Սակայն «occupied territories» արտահայտությունը բավականին մեծ աղմուկ բարձրացրեց

միջազգային ապարեզում, քանի որ ընկալվել էր որպես «բռնագավթած տարածքներ», ինչը հիմք ծառայեց Հայաստանին որակել ագրեսոր, և մեծ բարդություններ առաջացրեց հետագա բանակցություններում: Իրականում միջազգային հանրության մոտ «occupy» բառն այլ կերպ ընկալվելու տարբերակ չունի, քանի որ քաղաքական համատեքստում այն բացառապես նշանակում է բռնագավթում:

Հաճախ նախընտրական շրջանում ականատես ենք լինում այնպիսի դեպքերի, երբ մի մշակույթի հաջողված քաղաքական կարգախոսները փորձ է արվում ներմուծել մեկ այլ մշակույթ: Արդյունքը ոչ միշտ է գոհացնող լինում, որովհետև այլ երկրներում հաջողությամբ օգտագործված խոսքը ուղղակի հրանցվում է սեփական ընտրազանգվածին՝ առանց հաշվի առնելու տվյալ միջավայրի ակնհայտ տարբերությունը այն երկրից, որտեղ խոսքը լուրջ ազդեցություն է ունեցել հանրության վրա: Ակներև է՝ ովքեր անտեսում են այս հանգամանքը, ձախողում են իրենց առջև դրված նպատակները: 2013թ. նախագահական ընտրությունների քարոզարշավի ժամանակ թեկնածուներից մեկի՝ Բաֆֆի Հովհաննիսյանի կարգախոսն ուներ արևմտյան մշակույթին հարող որոշակի երանգ (տեղավորվում է “Yes, we can” տրամաբանության մեջ): Այն հնչում էր հետևյալ կերպ՝ «Հնարավոր է»: Ակամայից մեզ մոտ հարց է ծագում՝ ի՞նչն է հնարավոր: Կարգախոսն ակնհայտորեն արհեստական է, կիսատ է թվում, պահանջում է շարունակություն: Դա է թերևս պատճառը, որ նախընտրական հոլովակներում կարգախոսը ներկայացվեց արդեն ավելի բաց տեքստով՝ «Միասին ամեն ինչ հնարավոր է»:

Ճշմարտության ընկալման վրա կարևորագույն ազդեցություն կարող է ունենալ նաև բարոյահոգեբանական մթնոլորտը: Բարոյահոգեբանական մթնոլորտը կախված է որոշակի հանգամանքներից՝ կենսամակարդակ, արդարություն, ազատություն, վստահություն վաղվա օրվա նկատմամբ, երջանկության զգացում, անվտանգություն (օրինակ՝ պատերազմի կամ պատերազմի վտանգի պարագայում) և այլն: Այս գործոնի ազդեցության տակ ճշմարտության ընկալումը բոլորովին այլ երանգ է ստանում: Բարոյահոգեբանական մթնոլորտը կարող է համընդհանուր անտարբերության հիմք հանդիսանալ, որի արդյունքում մարդը կորցնում է իր հավատը և մերժում ցանկացած դրական փոփոխության խոստում:

Մեր կողմից ներկայացված հինգերորդ՝ սոցիալական գործոնը առանձին ուշադրության կարիք ունի: Մնացած չորս գործոնների հավասար պայմանների դեպքում խոսքի ճիշտ ընկալման և գնահատման համար սոցիալական վիճակը թերևս չի կարող է որոշիչ լինել:

Ատենախոսության երրորդ՝ **«Ճշմարտությունը»** և **«կեղծիքը» գործաբանական համատեքստում**՝ գլուխը բաղկացած է չորս ենթագլուխներից: Առաջին ենթագլխում (««Կեղծիքի» արտահայտումը խոսքային ակտերում») «Ճշմարտություն» և «կեղծիք» հասկացությունները դիտարկվել են գործաբանական լեզվաբանության տեսանկյունից՝ խոսքային ակտերի տեսության հիման վրա:

Խոսքային ակտերի տեսությունն իր զարգացումը ստացել է ամերիկացի լեզվաբան Ջ. Մերլի աշխատանքներում: Նա պնդում էր, որ լեզվական հաղորդակցման հիմնական միավոր են «ոչ թե նշանը, բառը կամ նախադասությունը, այլ խոսքային հոդորդակցման ժամանակ որոշակի նմուշի արտադրությունը: Մասնավորապես՝ որոշակի նախադասության արտաբերումը ինչ-որ պայմաններում հանդիսանում է իլոկուտիվ ակտ, որը խոսքային հաղորդակցման նվազագույն միավորն է»<sup>16</sup>:

Քաղաքական գործիչը խոսքին հաղորդում է որոշակի ուժ, որը մարմնավորում է նրա հաղորդակցային միտումը՝ խոսքային մտադրույթը: Ըստ Մերլի դասակարգման՝ բայերի այն խումբը, որն արտահայտում է «խաբեություն, կեղծիք», պատկանում է իլոկուտիվ ակտերի հաստատման խմբին<sup>17</sup>: Այսինքն՝ հաղորդակցման ժամանակ խոսողը հավաքվածներին ներկայացնում է իրավիճակը և ամրագրում այն: Ընդունելի համարելով Ջ. Մերլի դասակարգումը՝ պետք է այնուամենայնիվ նշենք, որ «կեղծիքը և խաբեությունը» կարող են արտահայտվել ինչպես հաստատման, այնպես էլ հորդորման, պարտավորեցման, արտահայտչական և ասացական խոսքային ակտերում, ընդ որում, ճշմարտությունը և կեղծիքը կարող են նաև համատեղ, միաժամանակ հանդես գալ: Եթե հաստատման ակտի պարագայում խոսողի խնդիրը լսողին համոզելն է իր պնդման ճշմարտացիության մեջ, ապա հորդորման դեպքում խոսողը փորձում է նաև դրդել լսողին ինչ-որ բան անելու, դիմելու գործողության՝ թեկուզ կեղծ հիմնավորմամբ: Պարտավորեցման ակտի նպատակը դիմացինին համոզելն է, որ խոսողը ապագայում պատրաստվում է անել որոշակի գործողություններ (պետք չէ շփոթել հորդորման հետ, որի նպատակը լսողին գործողության դրդելն է): Պարտավորեցման ակտի միջոցով նույնպես կարելի է լսողին մոլորության մեջ գցել և ներկայացնել նրան մի իրավիճակ կամ գործողությունների պլան, որն իրականությունից շեղվում է: Արտահայտչական ակտերը ուղղված են լսարանի մոտ որոշակի տպավորություն թողնելուն, ինչ-որ հոգեվիճակ ներկայացնելուն, որը կարող է հիմնված լինել ինչպես անկեղծ, այնպես էլ կեղծ մղումների վրա (ցավ, ամիսոսանք, կարեկցանք, երախտիք և այլն): Ստեղծելով որոշակի հուզական-հոգեբանական տրամադրություն, կաղապար՝ խոսողը վերաբերմունք է պարտադրում լսողին իր խոսքի նկատմամբ՝ անկախ պնդման ճշմարիտ կամ կեղծ լինելուց: Խոսքային ակտերից ասացականին աղբադառնալիս անհրաժեշտ է հիշել, որ այս տիպի խոսքը պահանջում է լսարանի որոշակի պատրաստվածություն, քանի որ հնչում են պնդումներ, որոնք կարող են իրականությունից բավականաչափ շեղվել կամ նույնիսկ որևէ եզր չունենալ նրա հետ: Չետևապես՝ հաղորդվող

---

<sup>16</sup> Серль Дж., Вандервекен Д. Основные понятия исчисления речевых актов // Новое в зарубежной лингвистике, вып. 18. Логический анализ естественных языков. М.: Прогресс, 1986, с. 247.

<sup>17</sup> Searle J. R. Expression and meaning. Cambridge, 1979.



տեղեկատվությունների համադրումը և նրա ճշմարտացիության վերլուծությունն ամբողջովին գտնվում է լսարանի պատասխանատվության տակ: Այս տիպի ելույթները հիմնականում գործ ունեն փաստերի և իրադարձությունների հետ, մինչև ժամանակ կարող են պարունակել ենթատեքստեր և թաքնված թիրախներ:

Երկրորդ ենթազխում («Անկեղծ և ոչ անկեղծ պնդումները գործաբանական համատեքստում») «Ճշմարտություն» և «կեղծիք» հասկացությունները քննվում են քաղաքական իրավիճակային համատեքստում: Վերլուծության հիմնական առարկա են Ամերիկայի պատմության մեջ ԱՄՆ նախագահներին առնչվող երկու աղմկահարույց միջադեպեր՝ Ռիչարդ Նիքսոնը Ուոթերգեյթի (Watergate scandal) և Բիլ Քլինթոնը Մոնիկա Լևինսկու միջադեպով: Երկու դեպքում էլ որոշակի գործոններ մեծ դեր են խաղացել կեղծիքի բացահայտման հարցում՝ նախագահի ինստիտուտը որպես հեղինակություն խոսքում մեջբերելը և դրանով այն անձեռնմխելի ու անխոցելի ներկայացնելը, երկար և երկակի իմաստ պարունակող նախադասություններ օգտագործելը, մեղադրանքը ժխտական նախադասությամբ կրկնելը:

Մամլո ասուլիսներից մեկի ժամանակ Նիքսոնն անում է հետևյալ արտահայտությունը՝

“...People have got to know whether or not their president's a crook. Well, I'm not a crook...”<sup>18</sup>.

«Ես խաբեբա չեմ». ահա այն արտահայտությունը, որ ԱՄՆ Նախագահն անում է ի պաշտպանություն իր «անմեղության»: Վերանայով քաղաքական ենթատեքստից՝ ակնհայտ է, որ երբ որևէ մեկին հանիրավի մեղադրանք են առաջադրում կամ կասկածի տակ առնում նրա ազնվությունը՝ առաջին արձագանքը, վստահաբար, նման կառույցներով չի արտահայտվում: Նա կարող է վրդովվել, անհավասարակշիռ կամ րնդիակառակը՝ ծայրահեղ գուսպ ելույթ ունենալ, արձագանքել հումորով կամ նույնիսկ վիրավորել դիմացինին, բայց երբեք չի կարող կրկնել մեղադրանքը ժխտական նախադասությամբ: Քաղաքական վերլուծաբաններին ապշեցրել էր Նիքսոնի կողմից արտաբերված այս նախադասությունը, քանի որ ենթագիտակցորեն նա դրանով ընդունել էր իր մեղքը և հայտարարել այդ մասին ի լուր աշխարհի:

Նմանատիպ արտահայտություն էր արել Բիլ Քլինթոնը: Մոնիկա Լևինսկու հետ իր հարաբերությունների առնչությամբ շրջանառվող ասեկոսեներին և լրագրողի հարցին նա պատասխանել էր մեղադրանքը կրկնելով, որով և խոստովանել էր իր մեղքը: Չնայած այն հանգամանքին, որ ամերիկացիները մեծ ակնածանքով էին վերաբերվում Բիլ Քլինթոնին, նախագահի սխալն, այնուամենայնիվ, նրան չներեցին:

---

<sup>18</sup> <http://www.youtube.com/watch?v=BxeFMHyOx3I>

Հետագայում պարզվեց, որ նրա պնդումը ևս սխալ էր, շատերը նրա այս արտահայտությունը համարեցին ինքնախոստովանանք:

Երրորդ ենթագլխում («Մանիպուլյացիան որպես ճշմարտության քողարկման միջոց») «Ճշմարտություն» և «կեղծիք» հասկացությունները դիտարկվել են խոսքի ներագրման տեսության շրջանակներում՝ համոզման և ներշնչման միջոցով: Ըստ Վ.Ե. Չեռնյավսկայաի՝ ժամանակակից լեզվաբանությունը խոսքային ներագրումն ուսումնասիրելու համար դիտարկում է համոզման և ներշնչման մեթոդները<sup>19</sup>: Նրանցից առաջինը կրում է տրամաբանական բնույթ, որի պարագայում դիսկուրսի հեղինակն իր փաստարկված խոսքով կարողանում է համոզել և հետևաբար՝ ուղղորդել մարդկանց մտքերը, ազդել նրանց որոշումների վրա՝ շեշտադրում անելով խոսքի բովանդակային կողմին: Իսկ երկրորդ մոտեցումը ներագրումն իրականացնում է ներշնչանքի միջոցով՝ ազդելով մարդկանց զգացմունքների, հուզականության և ներաշխարհի վրա, այսինքն՝ կարևորվում է ոչ այնքան բովանդակությունը, որքան ձևը: Խոսքային ներագրումը ենթադրում է նաև մանիպուլյացիա, որը միտված է լսողի տեսակետը փոխելուն ոչ ազնիվ կամ ոչ ուղիղ ճանապարհով:

Քաղաքական խոսքը վերջին մի քանի տասնամյակում սկսում է ավելի մեծ ուշադրություն սևեռել այն հանգամանքի վրա, որ լսարանի մոտ առաջացնի զգացմունքային արձագանք, էմոցիոնալ պոռթկում, քան լինի պարզապես չոր փաստերի վրա հիմնված: Ինչպես վերը նշվեց, վերջինս խոսքային ներագրման ներշնչման մեթոդն է: Սա թերևս պայմանավորված է առավելապես ամերիկյան քաղաքական ելույթներում նման հնարի կիրառման արդյունավետությամբ, և այդ է պատճառը, որ այն սկսեց լայնորեն տարածում ստանալ նաև օվկիանոսից այս կողմ գտնվող երկրների քաղաքական խոսույթներում: 1983թ. մարտի 8-ի իր «Չարագործ կայսրությունը» ելույթում (“Evil Empire Speech”) Ռոնալդ Ռեյգանը բավականին լուրջ հուզական շեշտադրումներ է անում՝ շոշափելով հարցեր, որոնք պատկանում են հոգևոր և բարոյական դաշտին: Նա խոսում է ԽՍՀՄ-ի մասին որպես մեծագույն չարիք, վարակ, որից պետք է հեռու մնալ՝ չկորցնելու հոգևոր արժեքները:

“I, a number of years ago, I heard a young father, a very prominent young man in the entertainment world, addressing a tremendous gathering in California. It was during the time of the cold war, and communism and our own way of life were very much on people’s minds. And he was speaking to that subject. And suddenly, though, I heard him saying, “I love my little girls more than anything—” And I said to myself, “Oh, no, don’t. You can’t — don’t say that.” But I had underestimated him. He went on: “***I would rather see my little girls die now; still believing in God, than have them grow up under communism and one day die no longer believing in God.***”<sup>20</sup>”

<sup>19</sup> Чернявская В.Е. Дискурс власти и власть дискурса: проблемы речевого воздействия: учебное пособие. 2-ое издание. М., 2012.

<sup>20</sup> <http://www.nationalcenter.org/ReaganEvilEmpire1983.html>

Բառերն, ինչ խոսք, ազդեցիկ են: Ռեյգանն իր ելույթում մեջ է բերում մի երիտասարդ հոր խոսքից հատված, որը նշում է, որ կզերադասի իր փոքրիկ դուստրերը մահանան հիմա՝ Աստծուն հավատալով, քան տեսնել, թե ինչպես են նրանք մեծանում ու դաստիարակվում կոմունիզմի ազդեցության տակ և մի օր մահանում՝ առանց այլևս Աստծուն հավատալու: Մակայն մինչ այդ նա հուզական առումով պատրաստում է լսարանին՝ որոշակի լարվածության մեջ պահելով նրան: Այդ լարվածությանը նպաստում են Ռեյգանի կողմից օգտագործվող ժխտական նախադասություններն ու կառույցները՝ oh, no, don't, you can't, don't say that: Զգացմունքայնությունը հաղորդվում է ժխտումների միջոցով: Հուզական առումով չի կարելի անտարբեր լինել հոր խոսքերի նկատմամբ: Օնոդը երբեք չի կարող մահ ցանկանալ իր զավակին: Բայց հանկարծ գտնվում է մեկը, որը հավասարության նշան է դնում մահվան և կոմունիզմի միջև, համարում այն մեծագույն հակաարժեք ու հրաժարվում նրանից՝ թեկուզ մահվան գնով: Հոր խոսքում ճշմարտությունը երևում է Աստծուն ծառայելու մեջ, որը կորում է մյուս կառավարման համակարգում: Նա երևույթին տալիս է սեփական հիմնավորումը, հուզական գնահատականը, չի ուզում, որ իր երեխաները դառնան չարի ծառաներ՝ ի դեմս կոմունիզմի: Միայն հուզականության վրա շեշտադրող խոսքն իր մեջ պարունակում է կեղծիքի մեծ հավանականություն և կարող է ունենալ կարճատև ազդեցություն:

Խոսքի ներագդումը մարդկանց գիտակցության վրա համոզման միջոցով ենթադրում է փաստերի ներկայացում, տրամաբանված խոսք, որի պարագայում խոսողի ելակետը ճշմարտությունն է, այն հնարավորինս մատչելի, բաց և հստակ ներկայացնելը: Հաջողված և ազդեցիկ քաղաքական ելույթներն անպայմանորեն հիմնված են լինում այս սկզբունքի վրա և հաջողություն գրանցում ծանրակշիռ ու տրամաբանված փաստեր ներկայացնելու դեպքում: Նմանատիպ խոսույթների շարքին կարող է դասվել 1983 թ. Ռոնալդ Ռեյգանի մեկ այլ՝ «Աստղային պատերազմներ» ելույթը (“Star Wars Speech”), որտեղ խոսում է ԱՄՆ և ԽՍՀՄ մրցակցության, հնարավոր միջուկային պատերազմի, Ամերիկայի ռազմական քաղաքականության մասին և այլն:

“The Soviet Buildup For **20 years**, the Soviet Union has been accumulating enormous military might... . During the past decade and a half, the Soviets have built up a **massive arsenal of new strategic nuclear weapons** - weapons that can strike directly at the United States. ... since 1969, the Soviet Union has built **five new classes of ICBM's**, and upgraded these **eight times**. ”<sup>21</sup>

Ինչպես տեսնում ենք մեջբերված հատվածից, Ռեյգանն օգտագործում է համոզման մարտավարություն՝ նշելով, որ չի խորշում Խորհրդային Միության հետ տնտեսական կամ գաղափարական մրցակցությունից: Ելույթի ամբողջական տեքստում առկա են ահռելի քանակությամբ թվերով հիմնավորված

---

<sup>21</sup> <http://pierretristam.com/Bobst/library/wf-241.htm>

փաստարկներ, որոնք չեն կարող անտարբեր թողնել ԱՄՆ քաղաքացուն: Ելույթում բերված բազմաթիվ փաստերի արդյունքում Ռեյգանը կարողացավ հասնել նրան, որ Մենատը հաստատեց ԱՄՆ ռազմական ծախսերի ավելացումը:

Չորրորդ ենթագլխում («Կեղծիքի բացահայտման արտալեզվական միջոցները») քննարկվում է մանիպուլյացիան՝ արտալեզվական մակարդակում: Առավել ցցուն օրինակների ուսումնասիրությունները ցույց են տվել, որ բաց կեցվածքը, ձեռքերի ոչ փակ դիրքը, տեղին ժպտալը, խոսքի և ժեստերի համահունչությունը թողնում են այն տպավորությունը, որ դիսկուրսի հեղինակի խոսքը հիմնված է ճշմարտության վրա: Մինչդեռ այքերի հաճախակի թարթումը, մարմնի պաշտպանողական դիրքը, խոսքի և ժեստերի անհամապատասխանությունը, երկչոտ կամ զգաստ կեցվածքն իրենց մեջ պարունակում են որոշակի կեղծիքի տարրեր, խոսում են այն մասին, որ միգուցե դիսկուրսի հեղինակն իրականում այն առաջնորդը չէ, որին փորձում է ներկայացնել:

Այս առումով ուշագրավ է Նիքսոնի և Քենեդու նախընտրական հեռուստաբանավեճերից մեկը նրանով, որ հարցումների համաձայն այն անձինք, ովքեր բանավեճը դիտել էին հեռուստատեսությամբ, մեծամասամբ հավանություն էին տվել Քենեդու ելույթին և հաղթանակ կանխագուշակել հենց նրան: Մակայն նրանք, ովքեր բանավեճը լսել էին ռադիոյով, հիմնականում քվեարկել էին Նիքսոնի օգտին: Խնդիրն այստեղ իհարկե տեսողական ընկալումների մեջ է, որտեղ իրենց մեծագույն ազդեցությունն ունեն ժեստերը, կեցվածքը, միմիկան, շարժումները: Տեսանյութերը դիտելիս ակնհայտ է, որ Նիքսոնի պահվածքը համոզիչ չի դարձնում իր պնդումները, նրա դիրքը ցույց չի տալիս, որ իրոք վճռական է, ինչպես նշում է իր խոսքում:

Ատենախոսության **եզրակացություններ** բաժնում ներկայացվել են հետազոտության հիմնական արդյունքները:

- Քաղաքական դիսկուրսում արտացոլված է հասարակական գիտակցությունը: Այն անմիջականորեն կապված է հասարակության արժեքային կողմնորոշումների հետ, որոնք հաճախ արտացոլվում են իմաստային և ճանաչողական կառույցներում:

- Ելնելով դիսկուրսի առանձնահատկություններից՝ գտնում ենք, որ քաղաքական դիսկուրսը քննելիս հասկացույթներն անհրաժեշտ է դիտարկել թե՛ ճանաչողական լեզվաբանության և թե՛ լեզվամշակութաբանության տեսանկյունից:

- Ժամանակակից քաղաքական աշխարհի պատկերում «ճշմարտություն» և «կեղծիք» հասկացույթները հանդիսանում են յուրաքանչյուր հասարակարգի արժեքային համակարգի խարխիս: Եթե ճշմարտությունը դիտարկվում է որպես համամարդկային արժեք, ապա կեղծիքը՝ համամարդկային հակաարժեք: Կեղծիք-ճշմարտություն հակակշիռների միջոցով անհատն իր ողջ կյանքի ընթացքում գնահատում և արժևորում է ոչ միայն ինքն իրեն, այլ նաև շրջապատող աշխարհը: «Ճշմարտություն» և «կեղծիք» հասկացույթների

առկայացումը տեղի է ունենում ազգային, կրոնական, մշակութային, քաղաքական գործոնների հիման վրա: Այն ներառում է գիտակցության ճանաչողական կողմը, ինչպես նաև հիմնվում է լեզվամշակութային առանձնահատկությունների վրա:

• 2. Ֆիլմորի և Մ. Մինսկու տեսությունների հիման վրա առանձնացրել ենք «ճշմարտություն» և «կեղծիք» հասկացությունների հետևյալ հասկացական կադապարները՝ ճշմարտություն-Աստված, ճշմարտություն-արդարություն, ճշմարտություն-ազատություն, ճշմարտություն-հայրենիք, ճշմարտություն-պետություն, ճշմարտություն-ընտանիք, ճշմարտություն-ներդաշնակություն, ճշմարտություն-երդում, ճշմարտություն-կարգ, ճշմարտություն-ազնվություն, ճշմարտություն-շահ, կեղծիք-ապատեղեկատվություն, կեղծիք-գրպարտություն, կեղծիք-մոլորություն, կեղծիք-աղավաղում, կեղծիք-անազնվություն, կեղծիք-խաղ:

• Անգլերենում ճշմարտությունը կիրառվում է երեք հիմնական իմաստով՝ համապատասխանություն փաստին կամ իրականությանը, փաստերի վրա հիմնված իրավիճակ և ազնվություն, ճշմարտացիություն: Հայերենում ճշմարտություն հասկացությոը գուցորդվում է այնպիսի երևույթների հետ, ինչպիսիք են արդարությունը, իրականությունը, ազնվությունը, օբյեկտիվությունը: Երկու լեզուներում էլ ճշմարտություն հասկացությոը լայն, ընդգրկուն, գլոբալ նշանակություն ունի: «Կեղծիքը» գուցորդվում է ոչ ճշմարտության, ոչ անկեղծության, դատարկության, շինծու լինելու հետ:

• «Ճշմարտություն», «կեղծիք» հասկացությունների պատկերային բաղադրիչն արտացոլվում է փոխաբերության մեջ: Փոխաբերություններում ճշմարտությունը ներկայացվում է անորոշ, վերացական կերպով: Օրինակների վերլուծության արդյունքում դուրս են բերվել այն փոխաբերական կառույցները, որոնք տեղ են գտել քաղաքական գործիչների ելույթներում՝ ճշմարտություն-ուղի, ճշմարտություն-լույս, ճշմարտություն-փարոս, ճշմարտություն-հրացույք, ճշմարտություն-կրակ, ճշմարտություն-ժողովրդավարություն, ճշմարտություն-տուն, ճշմարտություն-ամրոց, ճշմարտություն-համաշխարհային փորձ: Կեղծիքին առնչվող փոխաբերական կառույցներից առանձնացվել են հետևյալները՝ կեղծիք-«ընկեր», կեղծիք-«դաշնակից», կեղծիք-«բացառիկություն»: Ուսումնասիրության արդյունքները ցույց են տալիս, որ քաղաքական գործիչն օգտագործում է փոխաբերություններ հիմնականում երդմնակալության ժամանակ:

• «Ճշմարտություն» և «կեղծիք» հասկացությունների արժեքային բաղադրիչի հետազոտության հիման վրա համակարգվել են քաղաքական դիսկուրսի վրա ազդող հիմնական ճանաչողական գործոնները, որոնք առավել մեծ ազդեցություն են ունենում մարդկանց գիտակցության և աշխարհի պատկերի ձևավորման հարցում, դրանք են ա) գիտելիքների պաշարը (ձեռքբերովի և կենսափորձ), բ) տեղեկատվությունը, գ) արժեհամակարգը, մշակութային աշխարհընկալումը, դ) բարոյահոգեբանական մթնոլորտը, ե) սոցիալական վիճակը:

- Հետազոտելով Ջ. Սերլի տեսությունը, ըստ որի «կեղծիք և խաբեություն» խմբի բայերը համարվում են խոսքային ակտի հաստատման տիպին բնորոշ բայեր, գտնում ենք, որ «կեղծիք և խաբեություն» խմբի բայերը հստակ տեղավորվում են ինչպես հաստատման, այնպես էլ հորդորման, պարտավորեցման, արտահայտչական և ասացական խոսքային ակտերի տրամաբանական շղթայում, ընդ որում, նրանք կարող են նաև համատեղ, միաժամանակ հանդես գալ: Հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ «ճշմարտությունը» և «կեղծիքը» կարող են զուգահեռաբար հանդես գալ հաստատման, հորդորման, պարտավորեցման, արտահայտչական և ասացական խոսքային ակտերում:

- Խոսքային ներագրման շրջանակներում «ճշմարտություն» և «կեղծիք» հասկացությունները դիտարկել ենք մանիպուլյացիայի համատեքստում՝ հիմք ընդունելով համոզման և ներշնչման սկզբունքը: Առաջինը հիմնված է փաստարկված խոսքի և տրամաբանական մոտեցման, իսկ երկրորդը՝ մարդու, հասարակության հուզական աշխարհին ներագրելու վրա: Համոզման և ներշնչման մանիպուլյացիան դիտարկվել է նաև արտալեզվական մակարդակում:

Ատենախոսության հիմնական արդյունքներն արտացոլված են հրապարակված հետևյալ գիտական հոդվածներում.

1. Makunts L. The Role of Linguistic Means in Political Dialogue // Օտար լեզուները բարձրագույն դպրոցում, N11, ԵՊՀ հրատ., 2010, էջ 47-52:

2. Մակունց Լ.Կ. Քաղաքական դիսկուրսի վրա ազդող հիմնական ճանաչողական գործոնները // Օտար լեզուները բարձրագույն դպրոցում, N13, ԵՊՀ հրատ., 2012, էջ 60-71:

3. Մակունց Լ.Կ. «Կեղծիքի» արտահայտումը խոսքային ակտերում // Օտար լեզուները բարձրագույն դպրոցում, N13, ԵՊՀ հրատ., 2012, էջ 72-80:

4. Մակունց Լ.Կ. Ճանաչողական լեզվաբանությունը և նրա դերը դիսկուրս վերլուծության ժամանակ // Шестая годовичная конференция, Сборник научных статей, Издательство РАУ, Ереван 2012, с. 289-296:

МАКУНЦ ЛИЛИТ КАМОЕВНА

КОГНИВНО-ПРАГМАТИЧЕСКИЙ АСПЕКТ ИССЛЕДОВАНИЯ  
КОНЦЕПТОВ *ИСТИНА И ЛОЖЬ* В АНГЛОЯЗЫЧНОМ ПОЛИТИЧЕСКОМ  
ДИСКУРСЕ  
(В СОПОСТАВЛЕНИИ С АРМЯНСКИМ)

Диссертация на соискание ученой степени  
кандидата филологических наук  
по специальности 10.02.07 - “Германские языки”

Защита состоится 20-го декабря 2013 года, в 12:30 на заседании  
специализированного совета 009 – “Германские языки” ВАК РА  
при Ереванском государственном университете

Р Е З Ю М Е

Данная диссертация посвящена комплексному описанию концептов “истина” и “ложь” с позиций когнитивной и прагматической лингвистики в англоязычном политическом дискурсе в сопоставлении с армянским.

**Актуальность** диссертации определяется возрастающим интересом лингвистики к исследованию проблем концептуализации политического дискурса, моделирования структур сознания, обусловленных лингвокультурной средой и конкретной ситуацией общения.

**Цель** исследования состоит в моделировании структур концептов и выявлении тех прагматических механизмов, которые обеспечивают воздействие на картину мира адресата.

**Новизна** исследования заключается в рассмотрении концептов *истина и ложь* с позиций когнитивной лингвистики и лингвокультурологии, в выявлении тех когнитивных факторов, которые влияют на процесс вербализации в английской и армянской языковых картинах. Впервые концепты *истина и ложь* изучаются с позиций теории речевых актов, а также впервые изучение данных концептов рассматривается в комбинации с такими видами речевого воздействия как внушение и убеждение.

**Теоретическая значимость** исследования состоит в том, что результаты исследования могут быть использованы в развитии теории дискурса, когнитивной лингвистики, прагмалингвистики, лингвокультурологии. Изучение лингвокультурных концептов раскрывает также особенности соотношения языка и культуры, языка и мышления.

**Практическая ценность** работы определяется тем, что результаты исследования могут быть использованы в лекционных курсах и специальных курсах по когнитивной лингвистике, лингвокультурологии, прагматике, анализу дискурса. Представленный в работе материал и результаты его анализа могут быть интересны и для политических деятелей, политологов, политтехнологов и имиджмейкеров.

Диссертация состоит из введения, трех глав, заключения, библиографии и приложения.

**Во введении** формулируются актуальность, цели и задачи исследования, устанавливается научная новизна, определяются теоретическая значимость и практическая ценность диссертации, а также указываются методы и теоретическая база исследования.

**Первая глава** посвящена описанию теоретической базы исследования, рассматриваются понятия текст, дискурс, политический дискурс, излагаются основы когнитивной лингвистики, рассматриваются различные истолкования термина концепт.

**Во второй главе** проанализированы концепты *истина и ложь* с позиций когнитивной лингвистики и лингвокультурологии, представлен фреймовый и лингвокультурный анализы данных концептов, выделены и проанализированы понятийные, образные и ценностные составляющие концептов.

**В третьей главе** диссертационного исследования рассмотрены концепты *истина и ложь* с точки зрения прагматики, результаты анализа основаны на положениях теории речевых актов и теории речевого воздействия в сфере политического дискурса.

**В заключении** представлены основные результаты проведенного исследования.

**В приложении** представлены речи ведущих политических деятелей США и Великобритании 20 и 21 веков и отрывки из выступлений современных политиков Республики Армения.



LILIT MAKUNTS

CONCEPTS *TRUTH* AND *LIE* FROM THE POINT OF VIEW  
OF COGNITIVE AND PRAGMATIC LINGUISTICS  
(COMPARISON OF ENGLISH AND ARMENIAN POLITICAL DISCOURSES)

SUMMARY

The given research is devoted to the comparative study of the concepts *truth* and *lie* in English and Armenian political discourses by implementing both cognitive and pragmatic approaches.

At present, the radical changes in social and political life, the escalation of inner and international conflicts have stimulated linguists to focus their attention on political communication and mainly to the study of problems of conceptualization of political discourse, modeling the structures of consciousness due to linguistic-cultural environment and the specific situation of communication.

**The purpose** of the study is to model the structures of concepts based on cognitive linguistics and identify those pragmatic mechanisms that ensure the impact on the recipient's viewpoint.

**The innovation** of the study consists in the integrated approach to the analysis of these concepts from the standpoints of cognitive linguistics and linguistic culturology. Novelty is also manifested in identifying those cognitive factors that affect the process of verbalization in English and Armenian languages. Additionally, the novelty consists in studying the concepts of *truth* and *lie* as manifestations of speech acts.

**The theoretical significance** of the study is that the results of the research can be used in the further development of cognitive linguistics, pragmatics, cultural linguistics, stylistics, discourse analysis. The study also reveals the relationship between language and culture, language and consciousness.

**The practical value** of the work is determined by the results of the research, it can be used in lectures and special courses in cognitive linguistics, linguistic culturology, pragmatics, discourse analysis. The results of the analysis presented in this paper may be of interest to politicians, political scientists, political consultants and image makers.

The thesis comprises the following parts: Introduction, three chapters, Conclusion, Bibliography and Appendix.

**The first chapter** describes the theoretical framework of the study, discusses the concepts of text, discourse, political discourse, sets out a framework of cognitive linguistics, discusses different interpretations of the term concept.

**The second chapter** is devoted to the presentation of the concepts *truth* and *lie* as basic units of cognitive linguistics and cultural linguistics. The study reveals the main cognitive factors influencing the perception of political discourse.

**The third chapter** studies the concepts “truth” and “lie” from the pragmatic point of view, based on the theory of speech acts.

A handwritten signature in blue ink, appearing to read 'M. P. P. P.', is centered on the page.